

Ա.Չ. ПЕТРОСЯН

**ОБ ОСОБЕННОСТЯХ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ТЕРМИНОЛОГИИ В
НОВЕЙШИХ ТЕХНОЛОГИЯХ**

Рассмотрены некоторые особенности развития терминологии информационных технологий на современном этапе. В последние десятилетия в армянской действительности использование терминов в данной сфере развития науки не всегда упорядочено в учебной литературе в основном в силу не включения их в нормированные словари. В статье даны некоторые рекомендации в пользу нормирования новейших научно-технических терминов.

Ключевые слова: новейшие технологии, учебная литература, терминообразование, заимствование, варваризмы, иноязычные термины, нормирование терминологии.

H.Ts. PETROSYAN

**CONSIDERATIONS ON THE DEVELOPMENT PECULIARITIES OF THE
ARMENIAN TERMINOLOGY OF MODERN TECHNOLOGIES**

Some peculiarities of the modern stage development of the information technologies terminology are considered. In recent decades, the usage of the terms in this sphere of science developed in the Armenian reality is not always regulated – mainly due to their absence in standard dictionaries. Some guarantees in favour of regulating the application of modern scientific and technical terms are made.

Keywords: modern technologies, academic literature, term creation, borrowing, barbarism, foreign terms.

ՀՏԴ 81(653)

Վ.Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՕՏԱՐ ԲԱՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌԱԳՐԵՐԻ՝ 14-ՐԴ ԴԱՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Քննության են առնվել հայերեն ձեռագրերի՝ 14-րդ դարի հիշատակարաններում արձանագրված օտար ծագման այն բառերը, որոնց օտար լինելը գիտակցվում է հայերենի զարգացման բոլոր փուլերում:

Առանցքային բառեր. ձեռագիր, հիշատակարան, օտար բառեր, փոխառություն, գրիչ (ձեռագիր ընդօրինակող):

Ներածություն: Սույն ուսումնասիրությունը վերաբերում է ձեռագրերի՝ 14-րդ դարի հիշատակարաններում արձանագրված այն բառերին, որոնց օտար ծագումը գիտակցվում է հայերենի զարգացման բոլոր փուլերում: Ըստ բառարա-

նային տվյալների՝ այդ բառերը հիմնականում չեն վկայվել մինչև 12-րդ դարը գրված գործերում, այսինքն՝ գրաբարյան շրջանի մատենագրության մեջ: Թե՛ նախորդ դարերի և թե՛ 14-րդ դարի յուրաքանչյուր հիշատակագիր, հիշատակագրության ավանդույթի համաձայն, ձգտել է հետևել գրաբարյան օրինաչափությանը, սակայն հիմնականում պահպանելով գրաբարի քերականական համակարգը՝ կամա թե ակամա գրական վկայագիր է տվել ժամանակի խոսակցական լեզվին կամ իր բարբառին հատուկ և հատկապես գրաբարին անձանոթ օտար ծագման բառերի: Սակավ են այն հիշատակարանները, որոնք գրված են միջին հայերենով: Եղածներն էլ մեկ-երկու նախադասությունից են բաղկացած: Ուղղակի պետք է նկատել, որ գրաբարով գրված որոշ հիշատակարաններում մեծ չափերի են հասնում միջինհայերենյան իրողությունները: Ընդ որում՝ կանոնավոր կրթություն չունեցող անհատները, որոնց ընդօրինակությամբ է ձեռագրերի զգալի մասը, գրելով մեկ կամ մի քանի նախադասությունից բաղկացած հիշատակարաններ, առավել հաճախ են գործածել իրենց կենցաղ ներթափանցած և հարազատ դարձած օտար բառեր, մինչդեռ ուսյալ հիշատակագիրները՝ հայ գրականության և մշակույթի կարկառուն ներկայացուցիչներ, հոգևոր տարբեր աստիճաններ ունեցող անհատներ, վարդապետներ և այլք, ի տարբերություն նախորդների, գրել են սովորաձավալ հիշատակարաններ և գրաբարի հետևողությամբ հնարավորինս զերծ մնացել նման բառերից: Այսպիսով, գրաբարին անձանոթ օտար բառերը, գործածված լինելով բարբառներում, մեծ մասամբ գրաբար չիմացող բարբառախոսների միջոցով են մուտք գործել հիշատակարաններ:

Օտար բառերի գործածությունը ձեռագրերի՝ 14-րդ դարի հիշատակարաններում: Նախորդ ուսումնասիրությամբ 13-րդ դարի հիշատակարաններում վկայված օտար բառերին անդրադառնալիս նշել ենք, որ ամեն հաջորդ դարի պատկանող հիշատակարաններում օտարամուտ բառերն աստիճանաբար ավելի լայն գործածություն ունեն [1]: Պետք է փաստել, որ գրեթե հավասար ծավալ ունեցող 13-րդ [2] և 14-րդ [3] դարերի հիշատակարաններում այդպիսի բառերի թիվը խիստ տարբեր է: 14-րդ դարի հիշատակարաններում զգալիորեն շատ են նման օրինակները: Ավելին, շատերը ոչ թե պարզապես փոխատու լեզվի մշակութային, կենցաղային զանազան հասկացություններին վերաբերող բառեր են, այլ՝ համագործածական բառեր:

Առաջինները ազգային տիտղոսներ, կոչումներ, դրամական միավորներ և նման այլ իրողություններ նշանակող բառերն են, որոնք հայ լեզվաբանության մեջ հայտնի են «էկզոտիկ բառեր» կամ «տարաշխարհիկ բառեր» [4] տերմինով: Բնականաբար, ի տարբերություն օտար ծագման այլ բառերի, որոնք ունեն հա-

յերեն համարժեքներ, վերջիններիս գործածությունը անխուսափելի է: Ահա օրինակներ. **թանկայ** – ըստ ՄՀԲ-ի [5]՝ չաղաթ. tanka «արծաթե դրամ». «...ես՝ Սիմէոն վարդապետս, երեսուն **թանկայ** տուի...» (597). **մոթ** – ըստ ՆՀԲ-ի [6]՝ «բառ օտար, իտ. գրուան, կամ երեք գրիւ, կամ չորք արդուք», ըստ ՀԱԲ-ի [7]՝ հուն. «մի տեսակ չափ՝ երեք գրիւ կամ չորս արդու պարունակութեամբ» < հուն. «մօտ 25 լիտր պարունակութեամբ մի չափ է». «Յայսմ ամի եղև ի վերայ երկրի սով, զոր եղև **մոթն** մինչև ՃԺ. (110), զոր տէր Յիսուս խափանեսցէ յերկրէս մեր» (409) և այլն:

Եթե արդի հայերենի համար հստակ տարբերակելի են «փոխառություն» և «օտարաբանություն» հասկացությունները, ապա նախորդ լեզվափոփոխի համար առանձնակի դժվարություն է հարուցում այդպիսի դասակարգում կատարելը՝ մի կողմից պատկերացում չկազմելով ժամանակին այդ բառերի տարածվածության և հարազատության մասին, մյուս կողմից նկատի առնելով այն, որ դրանց ճնշող մեծամասնությունը մինչև օրս էլ գործուն է հայերենի բարբառներում:

14-րդ դարի հիշատակարաններում արձանագրված փոխառությունները հիմնականում արաբերեն, պարսկերեն և թուրքերեն բառեր են (այսուհետև՝ կրճատ ա., պ., թ.): Շատերը միաժամանակ հատուկ են եղել հիշյալ երեք լեզուներին էլ, ինչպես և կփաստենք ստորև: Սա է պատճառը, որ բառարաններում հաճախ որոշակի հստակություն չկա նշյալ լեզուներից որևէ մեկից փոխառյալ լինելու առումով:

Քանի որ հայ գրավոր մշակույթը դարեր շարունակ հիմնականում պատմագիտական և կրոնաեկեղեցական բովանդակություն է ունեցել, հետևաբար ժողովրդի կենցաղն ու նիստուկացը ներկայացնող բազում բառեր, այդ թվում դրանց՝ ժամանակին լայն տարածում գտած օտար համարժեքները չեն գրավել: Այդ բացը մասամբ լրացվում է հիշատակարանների շնորհիվ, որոնցում գրիչները հաղորդում են կենցաղային մանրամասներ: Բառարանային տվյալների համաձայն՝ ստորև բերվող փոխառությունների գերակշիռ մասի միակ վկայությունները ձեռագրերի հիշատակարաններից են:

Ինչպես և վերը նշեցինք, հիշատակագրությունների ժամանակագրական ընթացքին հետևելով՝ կարելի է նկատել, որ աստիճանաբար առավել մեծ չափերի է հասնում բարբառային-խոսակցական, դրանց մեջ նաև օտար բառերի գործածությունը: Դա մի կողմից պայմանավորված է նրանով, որ հետագայում մասամբ խախտվել է հիշատակագրության մեջ լեզվական բանաձևերի ու կաղապարների պահպանման դարավոր ավանդույթը, իսկ մյուս կողմից, ինչպես և նկատել է Է. Մկրտչյանը, մինչև 14-15-րդ դարերը «որևէ մեկին հիշելու կամ ինչ-որ մեկի հիշատակին նվիրաբերելու մասին չափազանց քիչ է նշվում, իսկ

սովորական, առօրյա դեպքերի մասին ոչ մի խոսք չի ասվում» [8]: Մինչդեռ արդեն 14-րդ դարի հիշատակարաններում ընդունված են դրանք, որոնք և պայմանավորել են առօրյա խոսակցության մեջ գործածվող օտար բառերի մուտքը:

14-րդ դարի հիշատակարաններում վկայված այդ բառերը հիմնականում արձանագրվել են ՄՀԲ-ում [5], մասամբ՝ ՆՀԲ-ում [6] և ՀԱԲ-ում [7]:

Հիշատակագիրները, անդրադառնալով տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձություններին, կառավարման գործընթացին, կրոնակեղեցական համակարգին, իրավական, շուկայական փոխհարաբերություններին և այլ բնագավառների, կիրառել են համապատասխան իմաստային դաշտերին բնորոշ օտար անվանումներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշատակարաններում գործածված փոխառյալ բառապաշարում զգալի թիվ են կազմում հատկապես անձնանիշ բառերը: Այն պայմանավորված է նրանով, որ հիշատակագիրները նշել են թե՛ իրենց պաշտոնը կամ զբաղմունքը և թե՛ հիշատակել են ժամանակի իշխանավորներին, իրենց մերձավորներին ու տարբեր մարդկանց, որոնք հատկապես որոշակի ներդրում են ունեցել այս կամ այն ձեռագիրը ձեռք բերելու գործում կամ նպաստել են գրառումներին: Այդպիսով գրական վկայություն են ստացել «պաշտոն, արհեստ, զբաղմունք, մասնագիտություն» նշանակող զանազան օտար անվանումներ:

Պաշտոն, կոչում, տիտղոս նշանակող բառեր: Թե՛ նախորդ դարերի և թե՛ 14-րդ դարի հիշատակարաններում սովորական է «պաշտոն, տիտղոս» նշանակող հետևյալ օտար բառերի գործածությունը՝ *մարաջախար* «իշխան, զորավար» < ֆր. (343 ևլն), *սիր* < ֆր. «արքա, իշխան» (204), *պայլ* < հֆր. «1. Մեծ իշխան, 2. Կիլիկյան շրջանում պարոնի փոխանորդ» (209), *ամիր* // *ամիրայ* < արաբ. «տեր, իշխան, կուսակալ» (295), *աթաբեկ* // *աթապակ* < չաղաթ., թուրք. atabeg «տիտղոս, որ շնորհվել է սելջուկյան ամիրայությունների կառավարիչներին և զորահրամանատարներին» (614) և այլն:

Նշված օրինակներին պետք է հավելենք նաև ստորև տրվածները. *ռէս* // *ըռէս* // *ռայիս* // *ըռայիս* // *ըռայէս* < ա. rāis «գլխավոր, կառավարիչ, գյուղի կամ քաղաքի ազդեցիկ ներկայացուցիչ». «Դարձեալ յիշեցէք ի սուրբ և ի մաքրափայլ յաղաթս ձեր զՎանայ քաղաքի *ըռէս* Կարապետն» (49), «Սպանին զմեր *ըռայիսն*, և այլ բազում երէց և կարգաւոր սպանին» (473). *նայիպ* < ա. nāib «փոխարքա, կուսակալ». «...վասն բազում մեղաց մերոց անօրէն *նայիպն* Հալպայ. . . . իբրև *զռափսակ* և զանձն առաջին, խաբեալ զարքայն Հայոց Լևոն. . . . » (294). ՄՀԲ-ում *ջամբլ* բառի մոտ հղում է արվել *ջամբուլայ* տարբերակը (< հֆր . chambrelan «սենեկապետ. պալատական տիտղոս»), ըստ ՄՀԲ-ի՝ հայտնի են

այլ հնչյունական տարբերակներ ևս. «... մեծ և հզարին և ամենամեծ **ջամբլին** Հայոց պարոն Հերմոյ» (477). **գունթ** < ֆր. comte «կոմս, ազնվականի տիտղոս». «Գրեցաւ գիրքս... ի պարոնութեանն Հայոց մեծի **գունթին** Սավրիոյ՝ պարոն Աւշի» (208). **ելչ** < թ. elçi, **շքրիկ** < վր. sikriki «պատգամավոր, դեսպան, սուրհանդակ». «Եբարձ սայ զերթևեկութիւն դեսպակաց, **ելչեաց** և **արղուչեաց** և կարգեաց յամենայն տեղիս սուրհանդակս, որ են **շքրիկք** և սակս արդար իրաանցն, զոր առնէր, փակեաց տէր աստուած զամենայն թշնամիս սորայ ի ձեռս սորայ» (24, վայր՝ Նախիջաւան). **պրիսմըծուխ** < լատ. proximus «վերակացու, տեսուչ». «...զորդի Թորոս **պրիսմըծուխ** հանգուցելոյն ի Քրիստոս և զծնաւոսն իւր յիշեսջիք ի Քրիստոս» (174). **շահնայ** (< պ. šahna «ոստիկան, ոստիկանապետ») «վարչական և հարկահավաք պաշտոնյա». «Յիշեսջիք... եւ զբարեպաշտ **շահնայն**՝ զՍարգիսն» (462, վայր՝ Երուսաղէմ):

Գանձաւաւս բառը ՄՀԲ-ում արձանագրվել է **գանձօլոս** տարբերակով: Բառարանագիրները **աւ** երկբարբառը սովորաբար փոխարինել են *o*-ով, քանի որ միջինհայերենյան շրջանում այն լիովին ձեռք էր բերել *o* պարզ ձայնավորի արժեք, միայն թե հիմնականում պահպանվել է գրության ավանդույթը: Նշված բառը **գօնսուլոս /կոնսուլ/** (< լատ. consul «կուսակալ») բառի հնչյունական տարբերակներից է, որը, համաձայն ՄՀԲ-ի տվյալների, եզակի վկայություն է. «...յայսմ ամի հրամանակատար եկեալ ի քաղաք **գանձաւաւս**, ըստ հրամանին Հոռնայեցոց...» (469):

Ըստ ՄՀԲ-ի՝ 14-րդ դարի հիշատակարանում գործածված **տրիսալար** բառը նույնպես եզակի վկայություն է: Նշված բառի համար բառարանագիրները ենթադրում են հետևյալ կազմությունը՝ պարսկ. deh, dih «գյուղ, ավան» և salar «գլխավոր, մեծ»: Նման մեկնությունը շատ հավանական է: Հիշենք, որ պարսկերեն **dih /դիհ/** բառը նշանակում է «կողմ», որ և այսօր էլ լայնորեն գործածվում է բարբառային հայերենում: Չմոռանանք նաև, որ հայերենում առկա է **կուսակալ** բառը, որը բաղադրված է **կոյս** «կողմ» արմատով և նշանակում է «ինչ-որ կողմի, վայրի կառավարիչ, պետ». «...եւ զմեծարգին եւ զմեծահարկն՝ Յակոբոս **տրիսալարն**,... եւ զփառաք ի փառս բարձրացեալ զԳրիգոր **տրիսալար**» (490, վայր՝ յերկիրն Մոկաց, ի վանքն Ծպատ):

Հիշատակարաններից մեկում վկայվել է **պոաւառթրանտէս** հնչյունակազմով բառ, որը ՄՀԲ-ում վերածվել է **պոաւառթրանտէս**-ի: Վերջինիս մոտ նշվում է **պոռփոքրօնտէս** < հուն. prōtofrontistēs «առաջին խորհող կամ խնամակալ», որ և՛ «նախաթոռ պատրիարք»: Այն ՄՀԲ-ում առկա է հետևյալ մեկնությամբ՝ «որպէս թէ առաջին խոհական խնամակալ, և վարժապետ, ուսումնասէր, իմաստասէր, և ճգնաւոր»: Կասկածից վեր է, որ ձեռագիր հիշատակարանը աղավաղ-

ված է եղել, ուստի դիտարկված բառի *n-ն* է հասկացվել, և *տ-ն*՝ *ա*, ասել է թե՛ սխալ ուղղում են արել նաև ՄՀԲ-ի հեղինակները: Այսպիսի տարրնթերցումները հաճախադեպ են: Այսպիսով, նշված բառը պետք է ուղղել **պռապորթանտէս**. «...ես տէր Յովհաննէս, յագգէ Արպելեանց, **պռապորթանտէս** Հայոց մեծաց և մեքրապալիտ Սիսական նահանգի...» (7):

Դատաիրավական համակարգին վերաբերող բառեր: Կառավարման գործընթացին վերաբերող տարբեր պաշտոններ և կոչումներ ցույց տվող վերոհիշյալ բառերին պետք է հավելենք նաև դատաիրավական համակարգին վերաբերող հետևյալ օտար բառերը. **խափի** // **ղափի** < ա. «1. դատավոր, 2. իշխան, կառավարիչ». «...զի կու հաչեն՝ թէ ձեր այսացիքն **զխափին** և **զդանըշմներն** սպանել են» (275). **արդուչի** < թթ. *yarğuci* «դատավոր». «Եբարձ սայ գերթենկութին դեսպակաց, **եչեաց** և **արդուչեաց** և կարգեաց յամենայն տեղիս սուրհանդակս» (24). **բրվէլէճ** < ֆր. *privilege* «արտոնություն». «Եւ շնորհեաց նոցա **բրվէլէճ**» (417). **ջիզայ** < ա., թ. *jizya, jizye* «գլխահարկ (ոչ մահմեդականներից, այլակրոններից գանձվող)». «...նեղեն զքրիստոնայքս **ջիզայով**, բայց Քրիստոս մեծ է, որ փրկէ զմեզ յամենայն վտանգից» (151). **անսիզ** < ֆր. *assises* «օրենք», իսկ **անսիզք** *Անտաքոյ* «Հայկական Կիլիկիայում գործող դատաստանագրքի անունը, որ Սմբատ Սպարապետը թարգմանեց հին ֆրանսերենից», **նամաւս** (*նամօս*) // **նօմոս** < հուն. *nómos* «օրենք, կարգ, կանոն». «Գրեցաւ **անսիզք** Անտաքոյն և **նամաւս** և կանոնք ընթանրական եկեղեցականաց» (239):

Կրոնակեղեցական կյանքին վերաբերող բառեր: **Քրաջուր** < ֆր. *précheur* «կաթոլիկ քարոզիչ». «ումեմն վարդապետի **քրա** Թումայ կոչեցեալ, ի կարգէ **քրաջուրացն**» (173). **Ֆրա** < իտ. *fra* < լատ. *frater* «հոգևոր եղբայր (ունիթորական միաբաններին տրված կոչում)» (517 կլն). հիշատակարաններից մեկում արձանագրվել է **էֆրաթ** բառը –*նի* հոգնակերտով, որը, ինչպես և նկատել է հիշատակարանների ժողովածուն կազմողը, լատիներեն *frater* «եղբայր» բառից է՝ **էֆրաթնիս** սուրբ ուխտիս (488, վայր՝ Քոնայ). **վիճիլ** < լատ. *vigiliae* «գիշերային ժամասացություն՝ ժամերգություն՝ եկեղեցական տոների նախատոնականերին, հսկում». «Կատարեցաւ շինուածս Սուրբ Էսաչ, ի տօնի **վիճիլին**» (517). **մոնոզոն** // **մոնազն** < հուն. «մենակեաց, կրօնաւոր, արեղայ». «...յիշէ անդ գրիչն Սարկաւագ **մոնոզոն**» (129, վայր՝ Յոհանավանք), «Չաշխատող բանիս և զգճող զՄատթեոս սուտանուն **մոնազնս** աղաչեմ յիշել ի տէր, և անմեղադիր լինել, զի այդչափ կարացի» (592, վայր՝ Երնջակոյ երկիր, Ապրակունեաց վանք). **մեքրապօլիտ**-ըստ ՆՀԲ-ի՝ բառ հուն. «մայրաքաղաքացի, որպէս Արքեպիսկոպոս մայրաքաղաքի». «Չգերաբուն բանի սպասաւորն և զարեգակնափայլ լուսատուն հոգոց՝ **զմեքրապօլիտն** Սիւնեաց... յիշեցէք ի տէր» (9), ի վերատեսչութիւն եպիսկոպոսութեան Սարգսի **մեքրապօլիտի** (292):

14-րդ դարի հիշատակարաններում *մահպեսի* բառը դրսևորվել է հնչյունական նոր տարբերակներով. *մահդասի* (425) // *մղպրսի* (623) // *մղպեսի* (491) // *մուղպսի* (523) < ար. muğdesi «Երուսաղեմ ուխտի գնացած քրիստոնյա»:

ՄՀԲ-ի հեղինակները հիշատակարաններից մեկում եզակի վկայությամբ առկայացած *գուբէննաթոր* (< լատ. «նահանգապետ») բառը, թերևս համատեքստից ելնելով, բացատրել են «եկեղեցական թեմի առաջնորդ». «Նայ և զասացեալ *Ֆրայ* Ասագտէրն հաստատեաց *գուբէննաթոր*, այսինքն՝ վերախնամող, ասացեալ կարգին» (417):

Արհեստ, զբաղմունք, մասնագիտություն ցույց տվեղ բառեր: Չրախճի < պ., թ. čerağci «մոմ թափող», *բազազ* < ար. bāzzaz «կտորեղենի՝ գործվածքեղենի վաճառական, կերպասավաճառ». «...զյոլով մասն գրոյս ետ ի նիւթ սորա և ի գրիչն, Բահատուր *բազազին*, պարոն Նասրատնին,Սիմէոն *չրախճուն*... և այլ երախտաւորաց» (վայր՝ Կաֆա, 265), «...ողորմեա Քրիստոս աստուած ստացողի սորա Սարգիս *բազազին*» (361). *քարխանաճի* < kar-xaneči «գործատեր». «Ես՝ Պուզմիշ հոռոմս՝ *քարխանաճիս* վկայ եմ գրոց» (576). *ուսթայ* < թ. usta «վարպետ», *ղասապ* < ար. qassab, պ. ḡāssab, թ. kasap «մսագործ, մսավաճառ». «Այլ և *զուսթայ* Մելիքշէն յիշեցէք» (625), «Դարձեալ աղաչեմ աղերսալի մաղթանօք յիշել ի Քրիստոս... և զաներն իմ *զուսթայ* Վրանն, և զորանչն իմ զՄարիանէ խաթունն, և զքենեկալն իմ Նուրադին *ղասապն* և զքենին իմ զԲելզա Մելիքն» (428). *ղալալ* < ար., պ. dāllal «1. միջնորդ, հանձնակատար, 2. մունետիկ». «Յիշեցէք... և զեղբայր մօր նորա՝ զԱսագ *ղալալն*» (327, վայր՝ Տայոց գաւառ, գիւղ՝ Վարդնշէն). *խոջայ* // *խաւճա* < պ. xoja «1. վաճառական, 2. վաճառականին տրվող տիտղոս» - ի վայելումն *խոջայ* Յուսուֆին (289), որդոյ *խաւճա* Աիրոնի (561), *ղանըշմն* < պ. danešmānd, թ. danišman «1. գիտուն, գիտնական, 2. մահմեդական գրագետ, մոլլա» «...այասցիքն *զխապրին* և *զղանըշմներն* սպանել են» (275):

Ուսումնասիրված հիշատակարաններում, ինչպես և վերը հիշատակել ենք, տեղ են գտել նաև առօրյա երևույթներ, փոխհարաբերություններ, տարբեր հատկանիշներ, կենցաղային իրեր և զանազան պարագաներ անվանող փոխառություններ, որոնք հատուկ են եղել նշված ժամանակաշրջանի ժողովրդախոսակցական լեզվին և բարբառներին: Այսպես. *պալի* < ար. bāqi, պ. bāgi ած. «մնացած, մյուս». «Զի ձեռն ելեալ բարձր ի վիմին մատամբն գրել յերես *պալին*» (639). *թախսուպ* < ար. ta'ssub «մոլեռանդ». «...և հալածանս յարուցանէր ի ձեռաց անաւրէն և *թախսուպ* նետողականաց» (283). *խալապայ* < ար. ḡalaba «բազմամարդ, աղմկալից». «Աղաչեմ զձեզ սուրբ ընթերցողք, որ անմեղադիր լինիք ախմարութեան գրչիս, զի անիմաստ էի և տեղս *խալապայ* էր» (94, վայր՝ Տայոց

երկիր՝ Շիկրակ գիւղ). **իլախայ** < ա., թ. alāxa «կապ, առնչություն, մասնակցություն». «...մարդ **իլախայ** կամ զրուց չունի հետ գրոցս՝ ծախելոյ կամ գրաւելոյ, այլ ինձ յիշատակ է և իմ ծնողացն, ամէն» (452). **ջաբռն** – ըստ ՄՀԲ-ի՝ «անստույգ նշանակությամբ բառ, թերևս՝ պ. jabrān «բռնությամբ, բռնի կերպով», որ և շատ հավանական է. «Բայց **ջաբռն** զօրքն չին ի թողոյ, որ հանգչէաք» (483). **մունաթ** < ա., թ. minnet, պ. mennāt «ողորմածություն, բարերարություն, շնորհ, երախտիք». «...և շատ **մունաթով** և երախտի ետ. . . .» (406, Հետ. Ստացող՝ Յակոբ Ասպիւրնկցի). **բուխարան** < պ. buhtan «զրպարտություն, բամբասանք». «. . . և զմանց տունս **բուխարանաւք** և հերծաւք և զւր բանիւք աւերել ջանան» (379). **հաւայ** < ա. havā «1.օդ, 2.եղանակ», **լայէխ** < ա., պ. lāyeq «արժանի, վայել, պատշաճ». «Եւ այս աշխարհիս ձմեռն խիստ է, **հաւայն** չէ գրագրու **լայէխ**» (Գրիչ՝ Խաչատուր, վայր՝ ի մայրաքաղաքիս Սարայ, մերձ առ ծովուն Կասփիականի, 156). **մալ** < ա., պ., թ. «հարստություն, ապրանք, ունեցվածք». «. . . մեր հալալ **մալովն** առաք դրաք դուռն ի սուրբ Նիշանին, ով որ կարդայ աստուծոյ մեր մեղացն թողութիւն խնդրէ» (95, վայր՝ Տայոց երկիր՝ Շիկրակ գիւղ). **խասապ** < ա. qist «մաս, բաժին». «Ու առ **խասապ** մի **մալ՝** ի մենէ, որ էր ԶՃՌ դրամ » (295). **ժուղլ** < ա. şugl «խոսք, զրույց, խառնաշփոթ աղմուկ». «**ժուղլ** խիստ է և ժխոր» (550). **մուրպառ** < պ. mordar , թ. murdar «1 . գեշ, լեշ, մեռելոտի, 2. կեղտոտ, գարշելի, աղտոտ». «Ի սով սաստկութեան սովացուցանէին, մինչ զի զշուն, զկատու, զէշ, զձի, զհեղձուկ, **զմուրպառ**, զսիրանունդ զաւակսն խորովէին և ուտէին» (579, վայր՝ Ախթամար). **լաշ** < պ. laş, laşe «լեշ, մեռելոտի». «Քրիստոսի անմահին վաշ, որ արար գնա **լաշ**» (306). **չարպախ** < պ. čartağ, թ. čartak «տաղավար». «Աւուրքըս ցուրտ ու պարզկա, **չարպախս** բարձր ու կրակ չկայ» (104). **փորմիթոր** < լատ. dormitorium «ննջասենյակ, ննջարան». «Շինեցի զսեղանատունս եւ **զփորմիթորս** վասն միաբանողաց եղբարցս կարգին» (517). **փրապէզ** < հուն. «սեղան». ՆՀԲ – ում որպես գլխաբառ տրված է **փրապիզ** տարբերակը, իսկ ՀԱԲ-ում էլ նշված են հիշյալ երկու տարբերակն էլ, մինչդեռ, ըստ բառարանների, հունարենում և այլ լեզուներում, է /ե/ -ով հնչյունական տարբերակն է. «...կամեցաւ ըստ ազնիւ ծառայիցն արկանել զարծաթն իւր ի **փրապէզս** գործոյ» (357, վայր՝ Սուրխաթ). **խոնչայ** < պ. xanče «քառանկյունի մեծ մատուցարան». «Բերէր խաղող մեծ կողովով, գինի բերէր մեծ տկերով, քաղա բերէր անունճ **խոնչով**» (605) և այլն:

Կտորեղեն, գործվածք, հագուստ, կաշի. քիմխայ < պ. kāmxa, թ. kemha «մետաքսե նուրբ կտոր, գործվածք». «. . . որ ետի գին սուրբ աւետարանիս **զքիմխայ** եւ զոսկի աւղերն» (վայր՝ Խարտիշարի վանք, 609). **լաթ** < պ. «գործված կտոր, շորի պատառ». «...որ զճաշոցս կապի, և կազմի, և արծաթ

կոճակով, և **լաթի** և շարքորի գարդարեաց» (469, վայր՝ Կաֆա). **չուխայ** < պ., թ. čuxa «1. բրդե գործվածքից կարված տղամարդու երկար փեշերով հագուստ, 2. բրդյա խավավոր գործվածք, մահուդ». «Տէր Յիսուս ողորմեսցի Վահրամ միայնակեցի, որ զիմ **չուխայն** կոխել երես» (188). **տաւպանդ** < պ. dilbend, թ. tülbent «բամբակե նուրբ կտոր՝ գործվածք, մարմաշ, ապարոշ». «....կապոյտ **տաւպանդ** ետուն փաթթել» (283). **ջունար** < հուն. gona «մորթի մուշտակ». «Որ է **ջունարն** Աստուածածնին, ի սպիտակ ի մարմարէ սնդուկի խորանին վեր» (վայր՝ Կոստանդինուպոլիս, 446):

Օտար ծագման որոշ բառեր մասնակցել են բառակազմությանը. դա վկայում է նշյալների՝ ժողովրդախոսակցական լեզվի մեջ տարածվածության մասին: Հատկապես մեծ թվով են ներկայանում օտար արմատներից բայական վերջավորությունների միջոցով և բայերի հարադրությամբ կազմված համադրական և հարադրական բայերը: Այսպես. «...ամէն շներն, որ հնազանդել էին չար հրամանին և աղաչեցին, որ **խալըսեցաք** ի տանէ բանդին» (< ա. xalās, xāles «մաքուր, անխառն», որից և՛ **խալըսիլ** «ազատվել, փրկվել», 276), «Նա ես **տամահեցա** ու գրեցի վասն անծին իմոյ և զաւակաց իմոց, զոր տէր աստուած վայելել տացէ բազում ժամանակաւ, ամէն» (< ա., թ. tama, tamah «ազահոություն, աչքածակություն», որից և՛ **տամահիլ** «փափագել», Գրիչ՝ Բարսեղ, վայր՝ Եզընկա, ի դուռն Վասկերտու, 509), «....ի նեղ և ի նուրբ ժամանակիս, որ թուրքն **խսարել** է զմեզ և զՍտըմբաւն» (< ա. hisār «պաշարում», որ և՛ **խսարել** «պաշարել», վայր՝ ի քաղաքս Խալատան, հանդէպ Կոստանդինուպալսի, 622), «Բազում աշխատանօք զթուղթն **նշայեաց** և կոկեաց» (< ա. nišā «օսլա», 398), «Ի թվ. ՁԼԲ. (1343), «....որ Ղարայ Հասան զԽլաթ **թախթանեաց**» (< պ. tāxtan «թալան, ավար», 334), «Սուքիաս երէցս այլ **ղապուլ արի**» (< ա. qabūl, պ. ḡābul «ընդունում, համաձայնություն», որից և՛ **ղապուլ անել** «ընդունել, համաձայնել», 596):

Այնուհետև նկատվում են հետևյալ կազմությունները. «Ձեռնարկեցի ի սմա ես՝ Կարապետ երէցս թարմատար **մելանաոր**, հասի ի զրաւ գրչութեան սորա ոչ թէ ըստ արհեստիցս և զարութեան անծինս, այլ ի կատարումն ուխտեալ հրամանի մարդասիրին, թէ ամենայն որ խնդրէ՝ առնու» (< հուն. «սևադեղ, թանաք», որից և՛ **մելանաոր** «ձեռագիր ընդօրինակող, գրիչ», վայր՝ Կաֆայ, 447), «...և Սուջագին, որ **մլքափէր** էր սուրբ ուխտիս» (< ա., թ. mīlk, պ. molk «անշարժ գույք, կալվածք», վայր՝ Սարի որ. Գեորգեայ վանք, 385), «...զոր արժանի է կրել հերձասացն և **բուխտանասացն** և զուր մատնաւն զպատիժ պատուհասի յարդար դատաւորէն Քրիստոս» (< պ. buhtan «զրպարտություն, բամբասանք», 379), «...քանզի ինքն տէրն միայն է **անխալափ**» (// **ղալափ** < ա., պ., թ. ḡalat «սխալ, սխալմունք», 282), «Եւ կատարեցաւ **նաղաշութիւն** սո-

րայ ի մեծ դաստակերտն Աստապատ կոչեցեալ» (< ա. naqqaš, պ. nāggaš «նկարիչ, զարդանկարիչ», վայր՝ Նախիջաւան, 25), «Աւետարանս գնեցաք ի գերութենէ գեղով, տուաք Լ ֆլորի, **սուպաշուքէն** Մելիիզէ Տեկիէ, տանուտիրութէն Ղանտի Մարաշին» (< թ. su-baši «1. ոստիկանապետ, 2. վերակացու, կառավարիչ», վայր՝ Տայոց երկիր՝ Շիրակ գիւղ, 95) և այլն:

Եզրակացություն: Դիտարկված օտարամուտ բառերը, համաձայն ՄՀԲ-ի, գերակշիռ մասով տվյալ ժամանակաշրջանի համար եզակի վկայություններ են: Նկատելի է, որ այդ բառերից շատերը եթե ոչ տվյալ ժամանակաշրջանում, ապա հետագայում լայնորեն կիրառվել են բարբառային հայերենում, ուստի և արձանագրված են ՀԼԲԲ-ում [9]: Որոշ օրինակներ առանձնակի հարազատությամբ գործածվում են նաև առօրյա խոսակցական լեզվում: Հիշատակարանները, այսպիսով, մեծ կարևորություն ունեն նաև օտար բառերի մուտքը, տարածվածությունը համապատասխան ժամանակային կտրվածքով պարզելու առումով: Այսպիսի ուսումնասիրությունները, անշուշտ, լույս կսփռեն հայոց լեզվի պատմության մի շարք կարևոր հարցերի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Խաչատրյան Վ.** Օտար բառերի գործածությունը 13-րդ դարի հիշատակարաններում // ՀԱՊՀ «Լրաբեր». Մաս 3.-Ե., 2016. - էջ 965-971:
2. **Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ** (ԺԳ դար) / Կազմ. Ա. Մաթևոսյանի.- Ե., 1984.- 377 էջ:
3. **ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ** / Կազմ. Լ. Խաչիկյանի.- Ե., 1950:
4. **Խղթայան Ֆ.** Ժամանակակից հայոց լեզու, Ա մաս.- Ե., 2009:
5. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.** Միջին հայերենի բառարան (ՄՀԲ).- Ե., 2009:
6. **Աւետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Աւգերեան Մ.** Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ).-Վենետիկ, 1836-1837:
7. **Աճառեան Հ.** Հայերէն արմատական բառարան (ՀԱԲ).- Ե., 1971-1979:
8. **Մկրտչյան Է.,** Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձաններում.- Ե., 1980:
9. **Հայոց լեզվի բարբառային բառարան** (ՀԼԲԲ) / Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ.- Ե., 2012:

В.М. ХАЧАТРИАН

ПРИМЕНЕНИЕ ИНОСТРАННЫХ СЛОВ В КОЛОФОНАХ 14-ГО ВЕКА

Рассматриваются иностранные слова, зарегистрированные в колофонах 14-го века. Эти слова были осознаны на всех стадиях развития армянского языка.

Ключевые слова: рукопись, колофон, иностранные слова, заимствование, переписчик.

V.M. KHACHATRYAN

APPLICATION OF FOREIGN WORDS IN THE 14-TH CENTURY
COLOPHONS

The foreign words registered in the 14-th century colophons have been considered. These words have been recognized at all the stages of development of the Armenian language.

Keywords: manuscript, colophon, foreign words, borrowing, copier.

ՀՏԴ 82-3:821.19

Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԽՆԴՐԱՅԻՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ
ՇԱՐԱՀԱՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ
(ըստ 20-րդ դ. 50-60-ական թթ. հայ արձակից քաղված օրինակների)

Շարահարությամբ կապակցված խնդրային ստորադասական նախադասությունները, որոնք առավելապես բնորոշ են խոսակցական լեզվին, իրենց արտահայտությունն են գտել գեղարվեստական խոսքում՝ սկսած 20-րդ դարի 50-60-ական թվականներից: Նշված շրջանի արձակից բերված օրինակների վերլուծությունը տեսանելի է դարձնում նմանատիպ կառույցների իմաստաքերականական առանձնահատկությունները և կարող է նպաստել արդի հայերենում դրանց նորովի դրսևորումների ուսումնասիրությանը:

Առանցքային բառեր. բարդ ստորադասական նախադասություն, խնդրային ստորադասություն, կապակցման եղանակներ, շարահարական կառույցներ, հնչերանգ:

Խնդրային ստորադասական նախադասության բաղադրիչները միմյանց հետ կապակցվում են ձևային և իմաստային այնպիսի եղանակներով, որոնք ընդհանուր առմամբ բնորոշ են բարդ ստորադասական նախադասության բոլոր տեսակներին, այսինքն՝ գերադաս և ստորադաս նախադասությունները միմյանց կապակցվում են 2 եղանակով՝ **սպասարկու բառերով** և **առանց սպասարկու բառերի**: Ուստի, ըստ կապակցման եղանակների, դրանք լինում են **զոդվածական** (կամ **նշութավոր**) և **շարահարական** (կամ **աննշույթ**):

Չնայած լեզվաբանության մեջ **շարահարական** կառույցները համարվել են ժողովրդական լեզվին հատուկ «խոսքերի կապակցության ամենապարզ սկզբնական ձև» [1, 609], սակայն դրանց ստորադասական տարբերակների վերլուծության մեջ առկա են տարակարծիք մոտեցումներ:

Շարահարական կամ աննշույթ կառույցներում ստորադասությունն ընկալվում է **հնչերանգով, իմաստով, շարահյուսական համանիշներներով** (զեղչված նշույթի վերականգնում) կամ բաղադրիչների **բայ-սպորոգյալների եղանակաժամանակային կարգերի** հարաբերությամբ: